ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. ԱՂՅԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԼՈՒՅՍԻ ՈՒԽՏԱՎՈՐԸ

Կամ՝ «Ցնորքի, ծարավի եւ հաշտության երգիչը»

Կյանքում եւ գրականության մեջ ես մի ուրիշ օրինակ չգիտեմ, որ այդպես էապես ցուցադրեր Տերյանի կյանքի ու գործի այդ անմնացորդ նվիրումը կյանքին. նրա գործն ու փորձը, նրա ձախողումն ու հաջողումը, նրա պոեզիայի միսն ու ոսկորը ամբողջովին ներկալվեց իր ժամանակի ու հեպազա հայ կյանքից ու գրականությունից: Նա չարտագրված բառ չունեցավ: Նա չքաղաքերված գող չունեցավ: Նա լեզու դրեց հայ գրականության բերանը, բնազդային անորոշ թրթիռները, որ անգամ Թումանյանից ճանաչվելուց էին խուսափում, Տերյանից անուն ու նշանակություն առան եւ իրենից հետո եկողի համար արդեն կայուն բառամթերք էին, իրենից հետո եկողն արդեն կարող էր հայոց լեզու հրավիրել նաեւ այնպիսի գրողների ու մտածողների, ում համար մինչեւ Տերյանի հայտնությունը մեր լեզուն տեղ չուներ: Արդյո՞ք այս նույն երեւույթը նկատի չունի Աստվածաշունչը խոսքի մասին իր առակում. «Ի սկզբանէ էր բանն...»: Միա՛յն

Հրանտ Մաթեւոսյան

Բոլոր մեծերը, բազում շնորհների կողքին, օժտված են նաեւ մի արտոնյալ առանձնաշնորհով. նրանք ոչ միայն իրենց ապրած ժամանակի շունչն են ու ոգին, ոչ միայն իրենց ժամանակի բովանդակային խտացումն են, խիղճ ու չափանիշն են, այլեւ բոլոր ժամանակների ժամանակակից են, բոլոր ժամանակների մեջ նրանք բյուրեղացած ներկայություն են, որովհետեւ նրանց է վստահված Աստծո շնորհով աշխարհն ավելի կատարյալ ու գեղեցիկ դարձնելու առաքելությունը: Դա տքնանք է ու տառապանք, տաղանդի շողարձակման մեջ երկրային վայելքների շրջանցում ու անձնական կյանքի փոշիացում է, բայց, ինչպես ասում են, մարդը գնում է, լույսը՝ մնում: Բամաստեղծի լույսը...

Վահան Տերյան... Հայ մեծ քնարերգու, գրական, հասարակական, ազգային ու պետական գործիչ, իր ժողովրդի ճակատագրով ապրող նվիրյալ մշակ, իր ժողովրդի դարերի խորքից եկող մշակույթը լուսապսակի տակ ներքաշող եւ դարաշրջան ցոլացնող ուսյալ... Նա մեր պոեզիայի քնարական ոգու արժանապատվությունն էր: Նրա տիեզերական թախիծը մեր պոեզիային պատարագային հնչեղություն հաղորդեց, պատարագային խաղաղություն: Իր բանաստեղծական խոսքը աղոթքի ցնծությամբ փառաբանող առաքյալ էր: Համո Սահյանի խոսքերով. «Տերյանը նարեկացիական մեր աղոթքն է»: Տերյանն իր վերջին սիրո խոսքը անվանում է աղոթք: «Վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր»: Պոետը պիտի վերադառնա իր սիրածի հոգում նոր լույսեր վառելու «որպես մոռացված մի երգ՝ **հյուսված աղոթքից,**

սիրուց ու ծաղկից»: Ողջ աշխարհը, - «պայծառ Աստծո անծայր փառարն է»: Իր հավատարմությունն ու սերը հայ լեզվին արտահայտելու համար նա ավելի վեհ հասկացողություն չի գտնում նմանության համար, քան աղոթքը, եւ պոետի ականջին նահիրյան լեզուն հնչում է որպես աղոթք...

Տերյանագիտությունն արդեն հարյուր տարվա պատմություն ունի, բայց ամեն տարի նորանոր գրքեր ու մենագրություններ են գրվում նրա մասին, որովհետեւ նրա քնարերգությունը անսպառ է ու անվերջ. ուշադիր ընթերցողը, հետազոտողը միշտ էլ նոր բան կգտնի դրա ծալքերում: Նա գրադարակների խուսացած քունջերում նիրհող այն դասականներից չէ, ում հիշում են առիթից առիթ, հոբելյանից հոբելյան՝ նորից տեւական ժամանակով մոռանալու տիտուր հառանկարով: Նրա պոեզիան չափանիշ էր երեկ, չափանիշ է այսօր, չափանիշ է լինելու նաեւ վաղը: Վկան՝ այն բազմաբովանդակային գրքերի առատությունը, որոնցից շատերը տպագրվում են նույնիսկ նրա մեկ բանաստեղծության պերճանքը վերծանելու համար...

Եւ ահա բոլորովին վերջերս լույս տեսավ Վահան Տերյանին նվիրված հերթական գիրքը[1]: Հերթական՝ քանակի իմաստով, արժեքային իմաստով՝ վաղուց սպասված: Շքեղ հրատարակություն է: Գիրքը հրատարակության է պատրաստել Ալբերտ Իսոյանը: Հրատարակության մեկենասներն են «Հզոր հայրենիք» կուսակցության նախագահ Վարդան Վարդապետյանը եւ «Ջավախք» հայրենակցական բարեգործական միության նախագահ Շիրակ Թորոսյանը: Գիրքը իր բնույթով հանրագիտարանային ժողովածու է, որը, հնարավորին չափ ամփոփ ընդգրկումով, հանրագումարի է բերում տերյանագիտության մեկդարյան անցած ուղին. ուսումնասիրություններ, հուշեր, գրախոսություններ, հոդվածներ, ինչպես նաեւ Վահան Տերյանի երկերի ու նրա մասին հրատարակությունների մատենագիտական ցանկեր: Սա մեր մշակույթի երախտավորների մտքի ու հույզի թելերից հյուսված, միս ու արյունով ոգիացած մի շքեղ, վառվռուն գորգ է, մի յուրօրինակ հոգեւոր հիշատակարան, բանաստեղծական մտքի տիեզերքում ճտվտացող մի ծիածան, որի անունն է Վահան Տերյան...

Խորհրդանշական է եւ բոլոր առումներով ճիշտ, որ գիրքն սկսվում է Հովհաննես Թումանյանի խոհերով. դա հաստատումն է այն իրողության, որ Տերյանը իր ժամանակի գրչի մշակներից ոչ մեկի հանդեպ չի ունեցել այն ակնածանքն ու պատկառանքը, ինչը որ ունեցել է մեծ բանաստեղծի հանդեպ: Պիտի փաստենք, որ հենց Թումանյանի նահապետ ներկայությունն էր, որ չափի էր բերում ժամանակի բանաստեղծական միտքն ու խոսքի տարաբեւեռ ընթացքը: Այստեղ տեղին է մեջբերել հենց իր՝ Թումանյանի նրբին դիտարկումը իր ժամանակի բանաստեղծական մտքի զարգացումների մասին. «Ռուսահայ բանաստեղծությունը - գրում է նա, - երեք շրջան է ունեցել: 1857 թվականին Ռ. Պատկանյանը՝ Գավառ Քաթիպան, հրատարակել է իր «Ազգային երգահան» անունով բանաստեղծությունների տետրակն ու նրանով սկիզբն է դրել առաջին շրջանի բանաստեղծությանը:

Նրանից երեսուն տարի հետո, 1887 թվականին, ուսանող Հ. Հովհաննիսյանը հրատարակեց իր բանաստեղծությունների առաջին գիրքը, ու սկիզբն առավ երկրորդ շրջանի բանաստեղծությունը:

Հովհաննիսյանից երեսուն տարի հետո էլ, 1908 թվականին դարձյալ ուսանող Վ. Տեր-

1 «Վահան Տերյան. Տերյանագիտություն. Մատենագիտություն», Երեւան, 2011, էջ 765:

յանը հրատարակեց իր «Մթնշաղի անուրջները» ու առաջ եկավ երրորդ, նորագույն շրջանը, որի մասին հանդիսավոր ու հավաքական կերպով խոսում ենք էսօր Հայ գրողների ընկերության մեջ:

Ինչպես տեսնում եք՝ ես ընկնում եմ երկրորդ շրջանի մեջ եւ կանգնած եմ հին շրջանի ու նորագույնի մեջտեղը: Մտերիմ ընկերներ եմ ունեցել առաջին շրջանի գրողներից, նորագույն շրջանի մեջ ունեմ մոտիկ եւ սիրելի մարդիկ: Սա ցույց է տալիս, թե ինչքան նոր է մեր բանաստեղծությունը, որ մի մարդ կարող է ընկերներ ունենալ առաջին գրողներից մինչեւ նորագույնները»:

Թումանյանը բոլոր տաղանդավոր մարդկանց էր գնահատում եւ սատար կանգնում նրանց, իսկ Տերյանի հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք ուներ, իր ոճով ասած՝ դեռ էն գլխից: Հովհաննես Քաջազնունու վկայությամբ. «Հիացմունքով խոսում էր ասպարեզ նոր իջնող տաղանդի մասին, ցիտատներ էր անում, ստիպում էր կարդալ, գնահատել, սիրել - ամենուրեք եւ ամեն կերպ ժողովրդականացնում էր երիտասարդ բանաստեղծի անունն ու գործը»:

Վահան Տերյան բանաստեղծի անձնական նկարագրի, նրա խառնվածքի, նրա մտքի թռիչքների մասին շատ նրբին դիտարկումներ կան Թումանյանի դստեր՝ գրականագետ Նվարդ Թումանյանի հուշերում: Գրքում ներկայացված է նրա խոսքը բանաստեղծի մասին եւ պատառիկներ «Հուշեր ու զրույցներ» գրքից: Իր «Նա սիրտ էր համակ եւ զգացմունք» խոսքում Նվարդ Թումանյանը գրում է. «Վահան Տերյանին առաջին անգամ ես պատահել եմ գարնանը-պայծառ ու վառ մայիսին, ու հիշողությանս մեջ էլ նա մնացել է որպես պայծառ ու վառ մի հուշ, մի սիրուն հիշողություն:

Նա իր խառնվածքով գերազանցորեն բանաստեղծ էր, իր էությամբ՝ մի աջող լիրիկ բանաստեղծություն:

...Զրույցների ժամանակ, երբ գրականությունից ու գրողներից էր խոսքը, սիրում էր արտասանել իր սիրած պոետների բանաստեղծությունները, զգացմունքով եւ երաժշտականությամբ էր արտասանում:

...Տերյանին շատ էր գրաղեցնում մեր լեզուն, նա աշխատում էր ստեղծել մաքուր գրական լեզու:

Վերջին տարիները հաճախ էր խոսում իր երկրորդ հատորից՝ «Երկիր Նաիրի»-ից. թանկ էր նրա համար Նաիրին ու նաիրարականը:

Նաիրիի ցավով էր այրվում ու նրա գալիքով մտահոգվում:

...Նա լիքն էր նոր կյանքի հավատով, արշալույսի ծագումով, որի առաջին շողերը միայն տեսավ, առանց նրա կեսօրը երգելու, ապրելու եւ տեսնելու:

Տերյանը նրա երկունքը միայն ապրեց եւ ինքն էլ, ավաղ, երկունքի մեջ մեռավ»:

Հետաքրքիր են նրա հուշերի պատառիկները. «Վահան Տերյանի սիրած թեման, որին հայրիկի հետ զրուցելիս հաճախ էր անդրադառնում, տաղաչափությունն էր, ոտանավորի երաժշտականությունը: Թումանյանը, ընդհակառակը, տաղաչափությունից քիչ էր խոսում, ավելի շատ խոսում էր գրվածքի ոգու, ստեղծագործական ներշնչանքի մասին»:

Հուշի այդ պատառիկներում մենք տեսնում ենք մեր մեծերին՝ Հովհաննես Թումանյանին, Վահան Տերյանին, Լեւոն Շանթին, Դերենիկ Դեմիրճյանին, Նիկոլ Աղբալյանին, Ստե-

փան Լիսիցյանին եւ շատ ու շատ ուրիշների: Բայց հիմնական նյութը Թումանյանի եւ Տերյանի շուրջ է հյուսվում: Թեպետ նրանք երբեմն հակակարծիք, բայց միշտ իրար հանդեպ ծնողի ու զավակի սիրով ու կարոտով էին լցված: Եւ սա կարմիր թելի պես ձգվող մոտեցում էր նրանց սկզբունքների ու դիրքորոշումների բանվածքում, երկու սերունդների գրական աշխարհայացքն էր, ժամանակների ծնած հոգեբանական խզվածությունն ու նաեւ բանաստեղծական մտքի զարգացման էվոլյուցիան, որ հինը կապում էր նորի հետ եւ դրանով իսկ ամբողջացնում հազարամյա հայ քնարերգությունը:

Վահան Տերյանի պոեզիայի առաջին գնահատողներից է եղել նաեւ Ավետիք Իսահակյանը, որը դեռեւս 1907 թ. տպագրված գրականության մասին տեսություն անելիս հատկապես առանձնացնում է Տերյանի «գեղեցիկ բանաստեղծությունները»՝ տպագրված մամուլում: Այնուհետեւ նրանք դառնում են ջերմ ու մտերիմ բարեկամներ, բանաստեղծական հիմնարար սկզբունքների հանդեպ համախոհներ, եւ թեպետ իրարից հեռու են ապրել, բայց միշտ նամակագրական կապի մեջ են եղել, միմյանց գործերից ու անձնական կյանքերից տեղյակ:

Գրքում ներկայացված են Ավ. Իսահակյանի խոսքը նվիրված Տերյանի մահվան 25-ամյակին եւ հատվածներ գրականագետ Սաքո Սուքիասյանին գրած նամակներից: Հուզիչ է Իսահակյանի խոսքը, ուր մասնավորապես ասված է. «Տերյանը 23 տարեկան հասակում հայ գրականության մեջ հրաշքի պես հանկարծ երեւաց իր «Մթնշաղի անուրջներ» կախարդիչ գրքով: Երեւաց արդեն իբրեւ կատարյալ լիրիկ բանաստեղծ՝ անթերի իր արվեստով եւ զգացմունքների ու հույզերի բյուրեղացած արտահայտությամբ:

Ընդհանուր հիացմունք առաջ բերեց նրա հանդես գալը: Դպրանիները հափշտակվեցին նրա բանաստեղծության թարմ շնչով եւ նոր ու նրբին զգայնությամբ: Հետագա իր գրքով, որ լույս տեսավ 1912 թվին, նա ընդմիշտ գրավեց իր տեղը հայ գրականության մեջ եւ առաջնորդը եղավ բանաստեղծական մի նոր դպրոցի, որ ունեցավ շատ հոտեւորդներ»:

Վերջում ամփոփելով նշում է. «Վ. Տերյանը մեր պոեզիայի ամենահոշոր ասպղերից մեկն է:

Անթառամ է նրա փառքի պսակը. անմահ՝ անունն ու գործը: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանալու նրան»:

Եւ, իրոք, ժամանակի ընթացքում նրա կերպարն ու բանաստեղծական թափը ավելի վեհ ու ազդեցիկ են դառնում: Եւ ամեն անգամ հուզախառն մեր ապրումներում, ասես լռության ընդերքից, Տերյանի երգեցիկ ու ծիսական խոսքն է հնչում, քաղցր ու անուշ հայերենը, ոճավորված նրբությամբ ու բանաստեղծական գյուտի շքեղությամբ:

«Թումանյան, Իսահակյան, Տերյան, - գրում է Համո Սահյանը, - ի՜նչ արժանի ժամանակակիցներ, ի՜նչ երանելի երրորդություն: Եւ աշխատանքի ի՜նչ արդարացի բաժանում նրանց միջեւ:

Եթե առաջինը՝ Թումանյանը եղավ մեր իմաստուն հառաչանքը եւ անկոտրում հավատը, երկրորդը՝ Իսահակյանը մեր սիրո կսկիծը եղավ եւ մեր զայրույթը չար աշխարհի դեմ, ապա երրորդը՝ Տերյանը եղավ մեր նվիրական աղոթքը եւ կենսահաստատ թախիծը»:

Գրականագետ Սաքո Սուքիասյանին ուղղված նամակում Ավետիք Իսահակյանը հետաքրքիր դիտարկումներ է անում Տերյան-Չարենց բանաստեղծական հանճարների մասին

խոսելիս. «Վահանից սերվածները էպիգոններ են: Ե. Չարենցը անշուշտ մեծ բանաստեղծ է, բայց ոչ կարկառուն լիրիկ: Նրա քնարական երգերը, մի - երկու բացառությամբ, շատ աղոտ բաներ են, Վահանի նսեմ հեգեռողություններ, ճապաղ, ջրալի: Նրա «Տաղարանը» շատ գեղեցիկ է, իսկ «Ես իմ անուշ Հայաստանի...»՝ ունիկում՝ մեր գրականության մեջ, աննախընթաց հրաշակերտ է: Միայն այսքան նրա լիրիզմից»:

Բարդ ու հակասական ժամանակներում ապրեց ու ստեղծագործեց Վահան Տերյանը. մի կողմից թուրքական յաթաղանի ահագնացող սարսափ, յաթաղան, որ արդեն սկսել էր իր արյունալի գործը եւ պատրաստվում էր ավելի մեծ ոճրագործության, մյուս կողմից՝ հոգեւոր զարթոնք, բանաստեղծական մտքի թռիչք, հայոց լեզվի լուսեղեն մի շքերթ, մեկը մյուսին չկրկնող, մեկը մյուսից հանճարեղ ստեղծագործողներ, որոնք իրենց փառապանքն անգամ լույսով օծեցին: Ակամայից զուգահեռներ ես անցկացնում նրանց ապրած ժամանակի եւ մեր ապրած ժամանակի միջեւ եւ կարկամում ես. այս ի՜նչ ավերիչ թափով կոշտացան մեր հոգիները. լույսին սկսեցինք նյութի խորքից նայել, դարձանք անտարբեր միմյանց ճակատագրի ու ստեղծածի հանդեպ, մեզ դուրս մղեցինք բառի ու տողի կախարդանքից, լույսով թաթախված հայոց լեզուն փակի տակ առանք, մեր անտարբերությամբ կարծես փաստելով, որ Վահան Տերյանի հայերենը գնալով որբանում է... Տերյանը սարսափով ու ցավով հարցնում էր. «Մի՞թե վերջին պոետն եմ ես, վերջին երգիչն իմ երկրի»: Հայ լեզվի եւ գրականության ապագան նա նույնացնում էր իր բախտի հետ: Ժամանակները թեպետ շատ էին հակասական ու անկանխատեսելի, բայց հոգեւոր շունչն արթուն էր մեր մեծերի մեջ, եւ բոլորովին պատահական չէ, որ Տերյանի «Մթնշաղի անուրջներ» գիրքը առաջինն է գրախոսել Հայաստանի առաջին հանրապետության լուսավորության եւ արվեստի նախարարը՝ գրականագետ, քննադատ, հասարակական-քաղաքական գործիչ Նիկոլ Աղբալյանը: Այդ գրախոսությունում նա մասնավորապես գրում է. «Վ. Տերյան անպայման բանաստեղծական տրամադրություններ եւ շնորք ունի. նրան պակասում է արվեստը: «Մթնշաղի անուրջներ»...ոչ մի խորագիր այնքան համապատասխան չէ եղած բովանդակության: Իսկապես որ անուրջներ եւ իրապես մթնշաղի անուրջներ:

Մթնշաղին մի նուրբ անդորրություն է իջնում մարդու վրա. տրամադրությունները դառնում են տարտամ, զգացմունքներն անորոշ ու հեշտին, երազները անձեւ եւ կամքը մեղկ: Այդ այն ժամն է.

Երբ ամեն ինչ խորհրդավոր ու խոհուն,
Ցնորում է կապույտ մութի աշխարհում.
Չըկա ոչ մի սահման դնող պայծառ շող.
...Եւ թվում է, որ անեզր է ամեն ինչ,
Եւ ողջ կյանքդ՝ մի անսահման քաղցր նինջ...

Այստեղ շատ հաջող է ասած. «Չըկա ոչ մի սահման դնող պայծառ շող». այսպես անորոշ սահմաններ ունին նաեւ Տերյանի բոլոր բանաստեղծությունները. հատ-հատ զգացումներ են, անկերպարան ու մեղմ. հատ-հատ տողեր են, որոնց ներքին կապը ավելի զուշակում ես, քան տեսնում ու շոշափում»:

«Մթնշաղի անուրջներ» գրքի աղբալյանական գրախոսությունը տարբեր կերպ են ընկալել եւ գնահատել գրաքննադատները: Օրինակ գրականագետ Էդվարդ Ջրբաշյանը իր «Բանաստեղծը եւ քննադատը» հոդվածում գրում է. «Անհնար է համաձայնել գրախոսության առաջին իսկ նախադասության մեջ առկա այն պնդման հետ, ըստ որի երիտասարդ բանաստեղծին, իբր թե «պակասում է արվեստը» կամ որ «ձեւի զգացումն ընդհանրապես անծանոթ է կարծես նրան»: Տարօրինակ եւ անընդունելի են թվում նաեւ խոսքերը, որ «Մթնշաղի անուրջների» հեղինակն, իբր թե «ընդհանուր առմամբ չի տիրում հայոց լեզվին, մինչեւ իսկ զարմանալի անիմանություն (այսինքն անհամապատասխանություն - Էդ. Ջ.) կա նրա բավական անտաշ լեզվի եւ մեղմ նյութի մեջ», կամ որ բանաստեղծն օգտագործում է «տգեղ երկբառեր» իսկ «հանգերը շատ աղքատ են եւ վհատ»: Այս կարծիքները բացարձակորեն անհամատեղելի են մի բանաստեղծի հետ, որի առաջին իսկ գիրքը մի իսկական հայտնություն էր հայ չափածոյի զարգացման մեջ, հավաստեց նաեւ գեղարվեստական կատարելիության մի նոր եւ ավելի բարձր աստիճան»:

Վահան Տերյանը, ինչպես նաեւ ամեն մի իսկական բանաստեղծ, միշտ զբաղվել է տարաբնույթ կարծիքների հոլովույթում, պարսավանքի ու գովեստի, դրվատանքի ու մերժման տարաբեւեռ մթնոլորտում, բայց նա միշտ իր բանաստեղծության պես վեհ ու պայծառ է մնացել: Եղել են նաեւ սահմանափակ մտքի ու աշխարհայացքի տեր մարդիկ, որ իրենց նեղմիտ մտածողության կապանքներում ջղաձգվելով, Վահան Տերյանի հայ գրող լինելու հանգամանքը պայմանավորել են միայն հայերեն գրելով, նշելով, որ նրա լեզուն հղկված չէ, աղքատ է, իսկ ինքը օժտված է բանաստեղծական փոքր տաղանդով: Ինչպես ասում են՝ փոքրիկ մարդկանց մեծիկ խոսքեր: Բարեբախտաբար մեծ արժեքներ ստեղծողները նրան դեռ դալար շիվի հասակում նկատեցին ու գնահատեցին, նեցուկ եղան, դրանով իսկ միջակությունների արշավների դեմն առան ու նրան մեծերի շարքը դասեցին:

Վահան Տերյանի պոեզիայի մասին շատ ջերմ է խոսել նաեւ հայ ժողովրդի մեծ բարեկամ, ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովը: Նա Հայաստանի համար ամենածանր ժամանակներում հրատարակեց «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը» ժողովածուն: Դա հայ մշակույթի, հայ մարդու կամքի ու նրա ստեղծագործ ոգու հանդեպ ակնածանքի ու պատկառանքի մի յուրօրինակ դրսեւորում էր, հավատամքի մի յուրօրինակ խտացում՝ հնագույն ժողովրդի մտքի խիզախումն ու ոգու թռիչքը մեկ անգամ եւս արժեւորելու առումով:

Վ. Բրյուսովը հայերենից ռուսերեն է թարգմանել Վ. Տերյանի բանաստեղծություններից եւ զետեղել «Հայաստանի պոեզիան» ժողովածուում: Սույն գրքում ներկայացված է «Հայաստանի պոեզիան» ժողովածուի ներածական ակնարկից Վ. Տերյանին վերաբերող հատվածը, ուր մասնավորապես ասված է. «Ռուսահայաստանի երիտասարդ բանաստեղծներից ամենաականավոր գործիչը պետք է ընդունենք Վահան Տերյանին: Բանաստեղծությունների առաջին ժողովածուով հանդես գալով 1908 թվականին, սակայն ավելի ուշ հրապարակած մի շարք բանաստեղծությունների մեջ զգալիորեն զարգացնելով ու խորացնելով իր պոեզիայի թեմաները՝ Տերյանը ընթերցողների ու քննադատների կողմից ընդունվեց որպես աներկբա մեծություն, թեեւ նրա գնահատման խնդրում ձայները բաժանվում էին: Սիմվոլիստների աշակերտ Տերյանը փորձեց հայ պոեզիային հարազատացնել այն ամենը,

ինչ ձեռք էր բերել եւրոպական (մասնավորապես ռուսական ու ֆրանսիական) պոեզիան ամենավերջին տասնամյակներում: Օրինակ՝ Տերյանը արծարծել է թեմաներ, որոնք նախկինում հայ բանաստեղծների տեսադաշտից դուրս էին մնացել, նոր չափեր էր փնտրում հայկական պոեզիայի մեջ, բացառիկ խստությամբ վերաբերվում հանգին, վերջապես տվեց մի քանի հիանալի թարգմանություններ նորագույն ռուս ու ֆրանսիացի պոետներից: Այս բոլոր ձգտումները Տերյանին մոտեցնում են ավելի շատ արեւմտյան բանաստեղծներին, սակայն նա հավատարիմ է մնացել «ռուսահայերի» դպրոցի հիմնական հոսանքներին՝ իր ոգեշնչումների սրտալիությամբ, շատ հարցերի հանդեպ ունեցած մոտեցմամբ, իր բովանդակ աշխարհայեցողությամբ (չխոսելով արդեն լեզվի ու ոճի մասին)»:

Տերյանի կյանքում առանձնահատուկ տեղ է ունեցել քննադատ, հրապարակախոս, թարգմանիչ, պետական եւ կուսակցական գործիչ Պողոս Մակինցյանը, ում հետ Լազարյան ճեմարանում եղել են դասընկերներ, համատեղ հրատարակել են «Գարուն» ալմանախի երեք գրքերը, հիմնադրել են «Պանթեոն» հրատարակչությունը: Մակինցյանը ողջ կյանքում եղել է Տերյանի մտերիմ ու հավատարիմ ընկերը, անդավաճան բարեկամը: Նա 1923-25-ին հրատարակել է Վ. Տերյանի երկերի ժողովածուն չորս հատորով: Նա ծրագրել էր նաեւ լույս ընծայել Վ. Տերյանի երկերի 5-րդ հատորը, ուր տեղ էին գտնելու բանաստեղծի նամակները: Նրա այդ ցանկությունները չեն իրականացել: Նամակների հատորի համար Պ. Մակինցյանը հավաքել էր Տերյանին պատկանող բազմաթիվ ձեռագրեր, որոնք մինչեւ օրս պահվում են նրա արխիվում, դստեր՝ Անահիտ Մակինցյանի մոտ, Մոսկվայում: Լույս տեսած գրքում տպագրված է Պ. Մակինցյանի «Վահան Տերյան» ուսումնասիրությունից մի ընդարձակ հատված, որտեղ խոսվում է բանաստեղծի ծննդավայրի, նրա մանկության ու հարազատների մասին, կրթության ընթացքի մասին. Գանձա, Ախալքալակի Քաղաքային դպրոց, Թիֆլիս, եղբոր՝ Արամի մոտ, այնուհետեւ Մոսկվա՝ Լազարյան ճեմարան եւ... մեծ կյանք: Եւ մեծ փորձություններ. կարճատեւ հրճվանք եւ տեւական թախիծ...

Տերյանի քառահատոր ժողովածուի լույսընծայման առիթով խոսք է ասել բանաստեղծի մեկ այլ մտերիմ ընկերը՝ գրականագետ եւ թարգմանիչ Յոլակ Խանզադյանը: Այդ քառահատորյակի մասին նա գրում է. «Դրանք պարունակում են բանաստեղծի բոլոր գրվածքները՝ չափածո թե արձակ, ըստ որում խմբագրողը նպատակ է ունեցել կազմել տերյանական էնցիկլոպեդիա՝ տրվում են բանաստեղծությունների այլ ընթեռնումները, սեւագիր հատվածները, բանաստեղծի արձակ գրվածները, անգամ լրագրային աննշան հոդվածները... Այս չորս հատորի մեջ գետեղված են Տերյանի բոլոր գրվածները՝ թարգմանական թե ինքնուրույն, արձակ թե չափածո, անավարտ թե ավարտված»:

Յ. Խանզադյանը չափազանց արժեւորելով Պ. Մակինցյանի արած գործը, միաժամանակ նշում է մի շարք թերություններ ու մի տեսակ ներողամտորեն հավելում. «Թերություններն ու սխալները անխուսափելի են այսպիսի գործի մեջ, որ շատ մեծ է մի մարդու ուժերի համար: Պ. Մակինցյանի կատարած աշխատանքը գրեթե մեծագործության նշանակություն է ստանում մեր պայմաններում, իր բոլոր թերություններով հանդերձ»:

Ինքնին հասկանալի է, որ ժամանակակիցների հուշերի, ուսումնասիրությունների, հոդվածների, գրախոսությունների այս կարգի համահավաք ամբողջականությունը շատ դյուրին է դարձնում տերյանագիտությամբ զբաղվողների խնդիրը, իսկ տերյանագիտությունը

անսպառ է, ինչպես որ անսպառ է Վ. Տերյանի պոեզիայի հմայքը: Եւ այս իմաստով Ա. Իսոյանի կազմած գիրքը իր հանրագիտարանային բովանդակությամբ իրոք որ սպասված գիրք է, մի յուրատեսակ տեղեկատու-ուղեցույց՝ Վ. Տերյան երեւույթի հետ առնչվողների համար.

Հարյուր տարվա հեռավորությունից գրականագիտական մտքի գունապատկերին նայելը ինքնին հետաքրքիր է՝ անկախ կարծիքների բովանդակությունից, անկախ այն բանից, թե այդ կարծիքները անթաքույց հիացումի արտահայտություն են, անկեղծ մտահոգության արդյունք, թե թաքնված միտումնավորությամբ են շնչում: Համոզվելու համար, թե ժամանակի գրաքննադատական միտքը ինչ ծայրահեղ դրսեւորումներ ուներ Տերյանի պոեզիայի հանդեպ, մեջբերենք մեկ այլ քննադատի՝ Գարեգին Եղգիբարյանի խոսքից մի հատված Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներ» գրքի մասին: Ինչպես ասում են՝ առանց մեկնաբանության: «Երիտասարդ պոետը շատ պեսիմիստ է եւ նրա երգերը ծայրահեղ հուսահատություն են ներշնչում ընթերցողին: Մի բան մխիթարական է, որ նրան հասկանալը շատ դժվար է, ուստի եւ պիտի կարծել, որ նրա գրքի ազդեցության տակ աշխարհը չի քանդվի եւ արեւը կշարունակի ցորեն ու գարի բուսցնել, թեեւ Տերյանը մոռացել է արեւի ուղին:

Շատ ափսոսում եմ, որ անձամբ ծանոթ չեմ այս երիտասարդի հետ, պետք է, որ նա շատ սրամիտ եւ կոմիկ մարդ լինի: Այսպիսի երիտասարդները, որոնք կյանքում շատ կենսուրախ են լինում եւ լավ քեֆ անողներ՝ շատ զարհուրելի բաներ են գրում առհասարակ: Մոդա է: Կարդացեք «Վիհի եզերքին» երգը. - Ոչ մի խելացի միտք, ոչ մի պատկեր, ոչ մի առողջ զգացմունք:

Բանաստեղծը մոռացել է Արեւի ուղին: Նախ արեւը ուղի չունի, որովհետեւ նա ոչ մի տեղ չի գնում: Երկրագունդը դեռ շարժվում է, բայց արեւին տեղից շարժելը կարող են միայն հայ բանաստեղծները, որոնց համար ոչ մի գիտություն, ոչ մի օրենք, ոչ մի բնական հասկացողություն նշանակություն չունի:

Բայց բացի նիգշեականությունից, պեսիմիստական ցնորքներից, այս ութսուն երեսանոց գրքույկի մեջ կան իդեալական զգացմունքների արտահայտություններ էլ, կան գեղեցիկ կտորներ: Իդեալական սիրո արտահայտությունն է «Ցնորք» երգը: Գեղեցիկ է վերջին ոտանավորը, որ «Գարուն» վերնագիրն է կրում»:

Իրոք որ՝ ճաշակին ընկեր չկա:

Հետաքրքիր դրվագներ ու մանրամասներ, ուշագրավ գնահատականներ ու վերլուծություններ կան հասարակական գործիչ, հրապարակախոս, խմբագիր Ռուբեն Դարբինյանի հուշերում: Նրա կարծիքով ռուսահայ երիտասարդ բանաստեղծների մեջ, որոնք հրապարակ են իջել Ավ. Իսահակյանից հետո, Վ. Տերյանն անտարակույս ամենաուշագրավն է ու ամենատաղանդավորը: Բայց միաժամանակ Դարբինյանը շատ անհանդուրժող է Վ. Տերյանի պոեզիայի «ոչ ազգային ոգու» հանդեպ:

Ռ. Դարբինյանը 1912-ին Գ. Պոլսի «Ազատամարտ» թերթում գրախոսել է Վ. Տերյանի բանաստեղծությունների առաջին հատորը: Հենց այդ գրախոսությունն էլ ներկայացված է այս գրքում եւ ուշագրավ հատվածներ հուշերի գրքից, որտեղ հիմնականում ներկայացված են Տերյանի կյանքի վերջին տարիների մի շարք դրվագներ:

«Ռուսահայ նոր բանաստեղծը» վերնագրով գրախոսությունում Ռ. Դարբինյանը գրում է. «Տերյան առաջին կովկասյան բանաստեղծն է, որ իր մոթիվներով ու իր ոգով ոչ ազգային

է, ոչ ալ ժողովրդական: Հայու պատմական փառապանքի ու ազգային ողբերգության ոչ մեկ արձագանքը կգտնեք իր երգերուն մեջ:

Տերյան ինքնամփոփ ու ինքնանպատակ, շեշտված անհատականություն մըն է, որուն վրա չի ծանրանար հայ ցեղին մարտիրոսության արյունաթաթախ դրոշմը եւ որուն լարերեն եւ ոչ մեկը կտրված կթվի Հայու առանձնահատուկ ճակատագրին ցնցումներեն:

Տերյանի հոգին չի ճանչնար նեղ սահմանները հայ հորիզոններու, հայ լեռներու ու ձորերու: Հեռու մայրենի իրականութենեն ու բնութենեն, ան կարծես ռուսական լայնածավալ դաշտերուն եւ սթեփներուն ազատ շունչն է առեր իր մեջ եւ համակվեր ռուս լայնարձակ ու անսահման երկնքի մեղմ, քնքուշ ու անորոշ թախիծին տենչերով:

Ես անջատված եմ հայրենի հողից,
Հայրենի տունս՝ իմ սրտին օտար.
Ինձ արյում է միշտ մի անհագ թախիծ,
Հավիտյան դյութող անհայտ ճանապարհ...
Հուզվում են, հոսում հեղեղները մեծ,
Մագլցում վերեւ եւ թավալվում ցած.
Զմրուխտե ջրեր, ձեզ ո՞վ վրդովեց,
Հայրենական տուն, հավե՜տ մոռացված...
Միեւնույն է ինձ Հյուսիս թե Հարավ, -
Մի խենթ տագնապ կա իմ հիվանդ սրտում.
Դա իմ հոգու մեջ մի անհագ ծարավ
Հավիտյան օտար, հայրենական տո՛ւն...

Տերյան սիրո երգիչ է. եւ իր քերթողության մեջ իշխողը գրեթե բացառապես էրոթիք մոթիվներն են: Այդ պատճառով քնարերգու է ան գերազանցապես:

Մեծ քաղաքի հարափոփոխ ու ժիռրային կյանքի արդյունքն է ան: Իր երգերը կկրեն նկատելի կնիքը խոշոր քափիթալիստական կեդրոնի անկայուն, դյուրագրգիռ ու մակերեւույթային հույզերուն եւ մտորումներուն»:

Այն որ քնադատական միտքը շատ հաճախ իրարամերժ գնահատականներով է ընդունում այս կամ այն տաղանդավոր գրողի մուտքը՝ բնական է. ի վերջո տաղանդավոր գրողի ստեղծածի շուրջ միշտ էլ հակասական կարծիքներ են լինում, եւ տաղանդավոր գրողին տաղանդավոր ընթերցող է պետք, որ ընկալումն ամբողջական լինի: Իսկ հակառակն ինքնին ընկալելի է. ոչինչ չի լինում միայն ոչնչի շուրջ: Բայց Վ. Տերյանի պարագային այդ հակասական կարծիքների ներքին խոռվքը հաճախ հասնում է ծայրահեղության: Այդ ծայրահեղություններն, իհարկե, ժամանակների խառնարաններում էին հունցվում. ժամանակները խառն էին ու միգամած, եւ վերելքի հրճվանքը հաճախ անկումի դառնությամբ էր ամփոփվում: Պատերազմի, հեղափոխության, կոտորածի մղձավանջները սրվերների պես քայլում էին մարդկանց հետ, թուրք բարբարոսն արդեն հայի արյան համին էր ընկել, հոգեվարքի ցնորքը ծանր մառախուղի թանձրությամբ նստել էր ժողովրդի շնչին... Մարդիկ մոլորվում էին հերոսի եւ հակահերոսի միջեւ, ազնիվի ու խարդախի, երկրի նվիրյալ զավակի ու ավարտված

տականքի միջեւ, շատ հաճախ սուրն ու կեղծիքն էին փառաբանվում, ու զգայուն հոգիներն ասես տեղ չունեին կյանքում... Ու Տերյան բանաստեղծը հուսահատված է կյանքից, հոռետեսությունը նրա լիրիզմի գլխավոր շերտն է. իր տրամադրության հանգույն նա ճգնում է մռայլել կյանքի պատկերը. ասես միայն բացասականն է նկատում: Սերն ու թախիծը, երազն ու ցնորքը, մահն ու խավարը, հուսահատությունն ու հոռետեսությունը, մեգ-մշուշն ու ցուրտ-խավարը հոգեկան տարբեր հույզեր են ծնում կյանքի իսկական պայքարից հեռու կանգնած բանաստեղծի մեջ: Հեռու, բայց միաժամանակ կյանքին շատ մոտ կանգնած բանաստեղծը, զարմանալ կարելի է, թե ինչպե՞ս կարողացավ այդ մթնոլորտում չկորցնել իր հոգու լույսը, ոգու արիությունը, եւ իր հնամենի երկրի հպարտ լեզուն ոսկու պես զնգացրեց քնած ականջներում... Լեզվի մեջ պատմություն կա, ոգի կա, եւ զուր չի ասել Ավետիք Իսահակյանը՝ «Մեր լեզուն մեր հայրենիքն է»: Զուր չի ասել Համո Սահյանը՝ «Մեր լեզուն մենք ենք որ կանք»: Եւ հենց այդ արքայական լեզվով Վ. Տերյանը հայրենիք կառուցեց՝ հոգեւոր հայրենիք...

Բայց ժամանակներն իրենց գործն անում էին: Հատկապես 1905 թ. ռուսական հեղափոխության պարտությունից հետո մտքերի ու սրտերի վրա իշխում էր թեւատարած հուսահատությունն ու լքումը: Երիտասարդությունը մի փրկարար հանգիստ էր որոնում, կամենալով մոռանալ ամեն ինչ եւ ամփոփվել ինքն իր մեջ. կյանքը դարձել էր տխուր, ճնշող, անտանելի, եւ դրա համար ամենքին հարազատ էին բանաստեղծի խոսքերը.

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, ամենին մոռանալ.
Զրսիրել, չրխոռիել, չափսոսալ - հեռանա՛լ...

Տերյանն ասես ջուր էր խմում բոլոր լքված սրտերից: Ֆրանսիացի իմաստասերի խոսքերով, իրոք որ՝ «Բանաստեղծն իր ժամանակի սրինգն է»: Ժամանակների անորոշ ու մռայլ թրթիռները անձրեւորդի պես թափանցում էին բանաստեղծի ապրիճանաբար մաշվող հոգու խորքերը, եւ ինքն իր մեջ հառաչող բանաստեղծը փախչել էր տենչում ժիռրից, մեկուսանում էր իր անուրջների թաքստոցներում եւ անընդհատ մենություն ու լռություն էր երազում, որտեղ տառապանքն անգամ ծիսական խորհրդավորության դիմակ էր հագնում, եւ մենության թախիծով պարուրված բանաստեղծը սգաթույր զգացմունքների եւ ինչ-որ վերերկրային երաժշտության զարմանալի ներդաշնակությամբ իր վախճանի ողբերգը երգեց.

Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում...
Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում...
Իմ շիրիմին դալկացող ծաղիկներ ցանեցեք,
Որ խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք.
Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն անսահման...

Բանաստեղծի հոգեկան ընկճվածության ու հուսահատության այդ թանձրացումների մասին քննադատ Հարություն Սուրխաթյանը գրում է. «Եւ իրավ, ինչ է մնում անել թշվառ բանաստեղծին, եթե ոչ մահ երազել, եթե ոչ թաղման մեղեդին հորինել, երբ նրան այլեւս անելու ոչինչ չէր մնում, երբ հասարակական կյանքը, պայքարը նա թողել ու հեռացել էր...»:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Կյուրեղ Քիպարյանի խոսքերով. «Վահան Տերյան երկու գլխավոր ձգտում հայտ բերավ. հոռետեսություն՝ բանաստեղծության, խորհրդապաշտություն՝ արվեստի մեջ»:

Բայց Վ. Տերյանը ինչ էլ գրի, ինչի մասին էլ գրի, ինչպես էլ գրի՝ լույսն առկա է. թախծի մեջ անգամ լույս կա, վշտի մեջ անգամ լույս կա... Ահա մի հրաշալի բանաստեղծություն՝ «Հրաժեշտի գագելը», որ նույն Հարություն Սուրխաթյանի խոսքերով՝ «Դա Տերյանի անժամանակ հրաժեշտի խոսքն է աշխարհին, որի մեջ չկա Ավ. Իսահակյանի ցասկոտ բողոքը, Դուրյանի անեծքն ու տանջանքը, բայց կա ճնշող թախիծ, մորմոք ու վիշտ»: Եւ իհարկե լույս...

Ամեն վարկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով,
Բորբ արեւին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս բարով:
Մնաք բարով, ասում եմ ես, բոլոր մարդկանց չար ու բարի,
Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես մնաս բարով:

Մարգարտաշար իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտույտներին ոսկի արտում ասում եմ ես մնաք բարով:
Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ դառնա.
Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով:

Մեր կարծիքով շատ հետաքրքիր դիտարկումներ կան կուսակցական, պետական գործիչ, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի «Վահան Տերյան» մեծարժեք հոդվածում: Ահա մի հատված այդ հոդվածից. «Թերեւս հիշում եք դուք Տերյանի բանաստեղծություններից որեւէ մեկը: Սակայն պատկերում եք դուք ձեզ դրա հյուսվածքի առանձին գծերը կամ ներկերի առանձին երանգները: Հազիվ: Հակառակը կարող է վկայել միայն ձեր արտակարգ հիշողության կամ ձեր հատուկ ուշադրության մասին:

Բայց չնայած դրան՝ դուք կարդում եք Տերյանին, սիրում նրա յուրաքանչյուր տողը: Դուք համակվում եք պոետի ապրումներով, ենթարկվում նրա տրամադրություններին: Իզուր չէ, որ Հայոց Հելիկոնի վրա Տերյանը մի ամբողջ դպրոցի հիմնադիր դարձավ, որ ոչ միայն երկրպագուներ ուներ, այլեւ՝ հետեւողներ:

Եւ սա հասկանալի է: Տերյանի ստեղծագործության ամբողջը իր խոսքի բովանդակության մեջ չէ, այլ թողած տպավորության: Նրա քնարի հմայքը իր կերտվածքի, իր ստեղծած մտապատկերների մեջ չէ, այլ՝ իր նվագների, իր հարուցած հույզերի: Նրա գեղեցիկը հայտնագործվում է միայն պոետի եւ ընթերցողների միջեւ ստեղծվող մտերիմ հարաբերության մեջ, քանի որ նրա պոեզիան գործ ունի նախ եւ առաջ ընթերցողի լսողության եւ ոչ նրա երեւակայության հետ: Բնորոշ է, որ պոետը ինքն էլ իր գրական արհեստանոցում ավելի շատ քնարական տեխնիկայի մշակումով էր զբաղված, քան քնարական պատկերների նկարչությամբ:

Այսպես էր Տերյանը նաեւ կյանքում:

Դուք լսել եք հաճախ նրա հեգնանքով լի, թերատ, հակասական դատողությունները իր մասին, շրջապատի մասին: Բայց դուք զգացե՞լ եք միշտ ինչ-որ մի ուրիշ լրջություն նրա բոլոր խոսքերի մեջ եւ մի ինչ-որ ներքին կապ նրա առանձին մտքերի եւ դատողության միջեւ: Տերյանը չուներ սիստեմական աշխարհայացք կամ, լավ է ասել, նրա աշխարհայացքի մեջ չկար գաղափարների ու մտքերի կուռ հորինվածք: Եւ սակայն, Տերյանն ամբողջական դեմք

էր, նա չափազանց զգայուն էր եւ ներհուն իբրեւ անհատականություն, որպեսզի չունենար իր միասնական, իր կայուն սկզբունքային վերաբերմունքը դեպի ինքն ու շրջապատը:

Այստեղ, ըստ երեւույթին, տեղի ուներ նույնը, ինչ նրա ստեղծագործության մեջ: Նրա գիտակցության ոստայնը հյուսված էր ոչ թե մտածողության ամուր թելերից, այլ զգացմունքների ու տրամադրությունների նուրբ մանվածքից: Եւ ամենից առաջ նրա մեջ կար սոցիալական բնազդների զգայուն կոմպաս, որ չէր լքում նրան փորձություններով ու գայթակղություններով լի նրա կյանքի եւ ստեղծագործության մեջ: Անգիտանալ այն՝ կնշանակե անգիտանալ նրա կյանքի եւ ստեղծագործության ներքին ընթացքը, չնկատել այն գաղտնի գոյությունը, որ հաղթանակի մեծ ճանապարհի վրա պիտի դներ թե՛ մեկը, թե՛ մյուսը»:

Այս ընդարձակ հատվածի մեջբերումը բոլորովին ինքնանպատակ չէ. սա, մեր կարծիքով, Տերյան մարդու բարդ ու հակասական խառնվածքի եւ Տերյան բանաստեղծի անպարագիծ զգացմունքայնության շատ նրբին ընկալում է. առանց այդ հատկությունների Տերյանը չէր լինի Տերյան, այլ կլիներ ընդամենը 20-րդ դարասկզբին ստեղծագործող հերթական մի պոետ: Թեկուզեւ՝ տաղանդավոր պոետ:

Բանաստեղծի տաղանդի ու մարդկային նկարագրի հանդեպ ճանաչողության այդ նույն թափանցիկ ընկալումն ունի նաեւ մեր արձակի վարպետներից մեկը՝ Ստեփան Զորյանը, որ Վ. Տերյանի պոեզիայով առաջին խանդավառվողներից մեկը եղավ եւ, ցավոք, առաջիններից մեկն էր, որ մեծ ցավով արձագանքեց բանաստեղծի կորուստը: Հրաժեշտի հենց այդ խոսքն էլ տպագրված է այս գրքում, որտեղ Զորյանը գրում է.

«Իմ գերեզմանը թող լինի հեռվում,
Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան.
.....
Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Թողեք որ հանգչի իմ սիրտը հոգնած:

Այս տխուր ցանկությունը կատարված է իսկությամբ:

Ծանր է, սակայն, ինձ համար գրել Տերյանի մասին, մի մարդու, որ այնքա՛ն սիրելի էր իբրեւ ընկեր, այնքան քնքուշ իբրեւ բանաստեղծ, այնքան երիտասարդ ու կարելիություններով լի, որ այնպես ջերմությամբ էր սիրում հայ գրականությունը եւ այնքա՛ն ծրագրեր էր փայփայում նրա համար: Դժվար է գրել մանավանդ այն պատճառով, որ չգիտես ինչ խոսքերով գնահատես նրան, որ խոշոր ածականների ընտելացած հայ հասարակությունն ըմբռնի, թե ինչ բանաստեղծ է կորցրել ինքը: Սա ասում ենք նրա համար, որովհետեւ հայ մտավորականներն ու թերթերը, չունենալով գնահատության չափի ու կշռի զգացում, գրեթե ամեն օր «մեծ մարդ», «խոշոր դեմք», «կարող հոգի», «հանճարեղ միտք», խոսքերը շռայլում են այնպիսի անհայտ, աննշան ու չնչին մարդկանց համար, որոնք արժանի չեն նույնիսկ հասարակ ուշադրության: Գնահատել Տերյանին այդ խոսքերով՝ նույնն է թե նրան էլ դասել այդ չնչին մարդկանց շարքում: Խոսելով գնահատության մասին՝ մենք չենք կարող չհիշել այստեղ մի տխուր հանգամանք եւս: Այն ժամանակ, երբ մեր թերթերը նույն այդ անհայտ, աննշան ու չնչին մարդկանց նվիրում են «բացառիկ» համարներ, նույն այդ ժամանակ հայ

գրականության պարծանքներից մեկին, երիտասարդության ամենասիրելի պոետին, «Նաիրի երկրի» երեւելի երգչին գլացվում է հինգ տողանոց մի վայելուչ լուր:

...Տխուր իրողություն»:

Մեկ այլ տեղում Ստ. Ջորյանը հարցնում է. «Ի՞նչ է երգում Տերյանը»: Ու ինքն էլ պատասխանում է. «Կյանքի տխրությունը, լքված հոգու տխուր երգեր, անհուսություն, դալուկ դաշտեր, մերկ անտառ, ցրտահար ու հողմահար տերեւներ, մենակություն, մերժված սեր, տրտմություն, եւ պայծառ օրերի անհուն կարոտ: Մոտիվներ ու երգեր, որոնք որքան խորը անհատական են, նույնքան եւ խորապես հասարակական:

...Անհույս տրտմության մեջ, սակայն, մեր բանաստեղծը երկար չի մնում: Լավ օրերի հույսով նրա տխուր դեմքը հատգհեստ պայծառանում է, եւ ցաված սիրտը ամոքվում ու էլ չի անիծում նա «ցավերը կյանքի», էլ չի տրտնջում «վիճակից ունայն»: Ամոքիչ բնությունը վանում է նրա տխրությունը, եւ նա ուրախ ձայնով դիմում է գարնան.

Բացել ես իմ դեմ ոսկեղեն հեռուն.
Ծաղկել ես սարո՛ւմ, անտառո՛ւմ, արտո՛ւմ...
Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում,
Ողջո՛ւն քեզ, արեւ, աղջյուն քեզ, գարուն...

Եւ այնուհետեւ, կյանքից հեռացած, իր օրերը մենության մեջ մաշող պոետը հաշտվում է կյանքի հետ, նրա հոգին խաղաղվում, հին ցավերը մոռացվում են, եւ նա երգում է.

Օրհնություն քեզ, երգ, եւ՛ երազ, եւ՛ սեր,
Օրհնություն քեզ, կյանք, անուշ ու անհուն,
Օրհնություն եւ քեզ, տանջանքի գիշեր,
Եւ երկունք, եւ մահ-փա՛ռք եւ օրհնությո՛ւն...

Եւ, վերջապես, իր ցաված սիրտը բացում է կյանքի առաջ՝ «նորից ու նորից սիրելու համար»...

Պետական, կուսակցական գործիչ, ճարտարապետ Հովհաննես Քաջազնունին «Անդարձ ճամփորդը» վերնագրով հուշեր ունի գրած Հովհաննես Թումանյանի մասին: Գրքում այդ հուշերից ներկայացված են հատվածներ Վ. Տերյանի վերաբերյալ: Հուշերում շատ հետաքրքիր եւ ուսանելի դիտարկումներ կան գրչի մարդկանց հանդեպ պետական գործչի գնահատականներում: Սա մի բաց ու անկեղծ տեքստ է, անբարդույթ ու անկաշկանդ մի շարադրանք, որտեղ, կարծես թե, իրենց սկզբունքը պաշտպանելու գրողական մղումով, խառնվածքի, զգայական պաթոսին տրվելու գայթակղությամբ, մտածողության ազատ ելեւէջներով ակամայից «բացահայտվում են», եւ գրչի մարդիկ, եւ ինքը՝ պետական, կուսակցական գործիչը: Ահա մի հատված այդ հուշերից.

«Մի օր Թիֆլիսում Օհաննեսը գալիս է մոտս հետը մի անծանոթ երիտասարդ:

- Սա քո հայրենակիցն է՝ Վահան Տերյանը, նոր է եկել Մոսկվայից... Իրան չես ճանաչում, բայց մթնշաղի երգերը հո անգիր գիտես: Լավ չարի՞, որ բերի...

- Շատ լավ արիր: Նստեցեք, խնդրեմ:

- Տո՛, դու հիմա արի խելքի բեր էս մեր երիտասարդներին, երեկվա ճուտերին... Ասում է՝ բանաստեղծության մեջ էականը բովանդակությունը չէ, ձեւն է...ո՞նց թե ձեւը...

Դեռ ճամփին, փողոցում, բռնվել էին տաք վիճաբանության եւ հիմա շարունակում էին:

Տերյանը՝ թունդ տարված ֆրանսիական սիմվոլիստների հովերով զարգացնում էր մի տեսություն, որը զարմացնում ու մի քիչ էլ զայրացնում էր Թումանյանին:

- Տո՛ ո՞նց թե...

Օհաննեսը չուներ հետեւողականորեն դատելու, միտքը զարգացնելու, իր թեզը հիմնավորելու, պաշտպանելու ընդունակություն, զուրկ էր դիալեկտիկայից (բառիս արիստոտելյան իմաստով): Մտածում էր պատկերներով, հատվածորեն փաստարկում էր օրինակներով եւ դատողության պակասը լրացնում էր սովորաբար առատ բացականչություններով:

-Ո՞նց թե... վահ, սարսաղ ե՞ս... Ուրեմն քո ասելով... Տնաշեն էդպես բա՞ն կըլի... Տուտուց-տուտուց մի խոսի... բաս էն, որ մինչեւ հիմի... Այ, հրեն էնտեղ... Տես ի՞նչ է գրում...

Խիստ զավեշտական էր Օհաննեսի հոչակավոր այդ «հրենը»: Ձեռքի մի լայն, անորոշ ժեստ էր անում, ցույց էր տալիս գրքերով լիքը ու դռները պինդ փակ պահարանները - «այ հրեն»...

...Տրամաբանելու կարողությունից զուրկ էր, բայց փոխարենը օժտված էր հրաշալի ինտուիցիայով: Դատող ու փաստարկող չէր, բայց իմաստուն էր՝ արեւելյան մեծ բանաստեղծների նման: Կարծես ճշմարտությունը, իսկական, խոսքերով թաքնված ճշմարտությունը, տրվում էր նրան ինքն իրեն, առանց մտքի երկար ու բարակ սպեկուլյացիաների եւ հաճախ նրա մի հատիկ խոսքը, բացականչությունը, անիմաստ ու անբովանդակ, ըստ երեւույթին, ավելի համոզուցիչ էր լինում, քան մի ուրիշի վարպետորեն կազմած սիլոգիզմները»:

Այստեղ նկատելի է զուգահեռված բնորոշումների մի օրինաչափություն. Հովհ. Քաջազնունու խոսքը Հովհ. Թումանյանի մասին՝ տրամաբանելու, վերլուծելու կարողության առումով, հիշեցնում է Ա. Հովհաննիսյանի խոսքը Վ. Տերյանի մասին: Համեմատեք ինքներդ: Հովհ. Քաջազնունի. «Օհաննեսը չուներ հետեւողականորեն դատելու, միտքը զարգացնելու, իր թեզը հիմնավորելու, պաշտպանելու ընդունակություն... Տրամաբանելու կարողությունից զուրկ էր, բայց փոխարենը օժտված էր հրաշալի ինտուիցիայով: Դատող ու փաստարկող չէր, բայց իմաստուն էր՝ արեւելյան մեծ բանաստեղծների նման...»: Ա. Հովհաննիսյան. «Տերյանը չուներ սիստեմատիկական աշխարհայացք կամ, լավ է ասել, նրա աշխարհայացքի մեջ չկար գաղափարների ու մտքերի կուռ հորինվածք: Եւ սակայն, Տերյանն ամբողջական դեմք էր, նա չափազանց զգայուն էր եւ ներհուն իբրեւ անհատականություն, որպեսզի չունենար իր միասնական, իր կայուն սկզբունքային վերաբերմունքը դեպի ինքն ու շրջապատը... Նրա գիտակցության ոստայնը հյուսված էր ոչ թե մտածողության ամուր թելերից, այլ զգացմունքների ու տրամադրությունների նուրբ մանվածքից...»:

Գրականության եւ գրականագիտության շրջանակներում (եւ ոչ միայն) հայտնի է Ե. Չարենցի հոգեւոր կապը Վ. Տերյանի հետ. ոչ մի ստեղծագործող հետեւողականորեն ու տեւական չի զբաղեցրել Չարենցի միտքն ու հոգին, որքան Տերյանը: Այս գրքում տպագրված են Ե. Չարենցի երկու հուշ-պատառիկները, ինչպես նաեւ Վ. Տերյանին վերաբերող բազմաթիվ բանաստեղծություններից մի քանիսը, նաեւ մի քանի դրվագ Ռուբեն Զարյանի

հուշերից: Այս հուշերից մեկում Ռ. Զարյանը պատմում է, թե ինչպես է մի անգամ Պեպրիբատում հանդիպել Չարենցին՝ Վ. Տերյանի բանաստեղծություններն արտագրելիս: Խոսք է բացվել Վ. Տերյանի մասին, ու Չարենցը բացվե՛լ է... «Վեր կացավ, պահարանից հանեց Մակինցյանի հրատարակած Տերյանը.

- Այս է իսկական Տերյանը:

Ձեռքին երկրորդ հատորն էր:

- Տերյանը սա է, որ չգիտեն, դժբախտաբար: Այստեղ է նրա իսկական հմայքը:

Ու թեև հատորը ձեռքին, անգիր ասաց «Տեսա երազ մի վառ...» բանաստեղծությունը:

- Սա գիտե՞ս ինչ է, մինիատյուր, իսկական մինիատյուր: Հազվագյուտ իտրացում: Մտքի, երևակայության այս անհերևակայելի թռիչքը միշտ էլ ինձ հիացրել է:

Մի փոքր լռելուց հետո երկու ոտանավոր էլ կարդաց, սկզբում «Դու հպարտ չես, իմ հայրենիք», իսկ հետո՝ «Մշուշի միջից տեսիլ դյութական»:

- Ո՞վ է երկրի մասին այսպես գրել: Ոչ ոք: Հա՛, գուցե մեկ էլ Թումանյանը: Մնացածը պրիմիտիվ է, հասարակ, ամեն ինչ ուղղակի է ասված, «лобовой» , ասես քարոզ լինի, միտինգում ասված ճառ: Սեր՝ զգում ես, որ կա, բայց արտահայտություն չկա, վառված սիրտ, այո, կա, բայց պատկերը գտնված չէ: Տերյանն ուրիշ է: Լսիր.

Չշլացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փառքով երբեք. -
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ,
Եւ երգերդդ մեղմ ու բեկ-բեկ,
Խեղճությունդդ՝ խավար ու լուռ,
Աղոթքներդդ դառն ու ցավոտ,
Ձանգակներիդ զանգը տիտուր
Եւ խուղերիդ լույսերն աղոտ...

Լռեց ու ինձ նայեց: Ես ասացի.

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արեւն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթնում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սեւ
Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:

Ծիծաղեց:

- Այո՛, այո՛, այդպես է: Արմատներս այստեղ են, Տերյանի մեջ: Եւ միայն ի՞մը, արդյոք: Ճատերն են նրանից գալիս: Եւ ուրիշ ինչպե՞ս: Տերյանը բարձր տեսակ է, իսկական փղոսկր: Կրկնել չի կարելի: Ելակետ է, բայց ճանապարհն ինքդ պիտի անցնես...»:

Հրաշալի է ասված՝ կարճ, դիպուկ, սպառիչ ու ավարտուն:

Տերյանին պաշտող «խենթերից» էր նաեւ մեր տաղանդավոր, «չափի չեկող» բանաստեղծներից մեկ ուրիշը՝ Գուրգեն Մահարին՝ Գուրգեն Խանը: Անդրանիկ Ծառուկյանի բնո-

բոշմամբ՝ «Տէրեանի հեգամրմունջ առուակէն՝ Չարենցի շառաչող ջրվէժին փանող ծածուկ կամուրջը - Գուրգէն Մահարին...»: Վ. Տերյանի, Ե. Չարենցի եւ Գ. Մահարու հոգեկան կապվածությունն ու բանաստեղծության հանդեպ հավատամքի փիեզերական չափերի ընդգրկումն առանձնապես ընդգծելու համար, հրապարակիչը նպատակահարմար է գտել գրքում զետեղել Գրիգոր Աճեմյանի հոդվածը, ինչպես նաեւ էջեր մահարիական տերյանապատումից: Գ. Աճեմյանը այդ հոդվածում նշում է, որ քնարերգության ժխտման տարիներին Մահարին բանաստեղծություններ էր նվիրում Տերյանին, Թումանյանին, Հովհ. Հովհաննիսյանին, Ավ. Իսահակյանին, ընտրելով պոեզիայի ամենաքնարական ժանրը՝ գազելը: Տերյանին ձոնված գազելները տարբեր էին: Հենց միայն «օ՛, տրտում Տերյան...» կամ «Ո՞վ է թքում քո կրակին...» կրկնվող տողերը վկայում էին դրանց քնարական ու բանավեճային բնույթների մասին:

Իհարկե Տերյանի հասցեին Չարենցի «թքոտ»-ը էժան չնստեց վերջինիս վրա ոչ միայն այս գազելի առումով: Մի միջադեպ էլ է եղել Չարենցի ու Մահարու միջեւ... նրանց երկխոսությունից մի հատված է մեջբերում Գ. Աճեմյանը, իր «Տերյանը բոլորից մեծ էր...» հոդվածում: Ահա այն.

«Լազարյան ճեմարանի բակում տխրեց:

-Տերյանը սովորել է այստեղ, այս դռնով հազար անգամ ներս ու դուրս է արել... Մենք ինչ ենք նրա հետ համեմատած, խուժաններ...

-Էլ ինչո՞ւ գրեցիր «հաճելի է չէ՞ ձեզ էլի Տերյանի երգը թքոտ...»:

-Բա ես ինչո՞ւ եմ ասում, խուժաններ ենք... Տերյանը շատ մեծ է: - Սկսեց գրեթե երգել քթի տակ. - Ոսկեհանդերձ եկար ու միգասքող... - Բա՞ս... էսպես կգրեն:

-«Տերյանի երգը թքոտ», - քրթմնջացի ես:

Նա կանգնեց, հանեց գլխարկը, խփեց ծնկին, բարկացած ասաց.

-Վերջ տուր, Գուրգեն Խան...»:

Սա չէր նշանակում, թե Չարենցը միանշանակ ընդունում էր իր երիտասարդների սխալը: Այդ «սխալը» անհրաժեշտ էր նրա ինքնահաստատման ճանապարհին: Նա շատ բան չհասցրեց գրչին հանձնել, եւ մեզ օգնության են հասնում Մահարու հուշերը.

«-Ես հերքեցի Տերյանին եւ ստեղծեցի իմ գրականությունը, բա ինչո՞ւ դուք ինձ չեք հերքում, եթե ուզում եք ձեր գրականությունն ստեղծել:

Հարցն ուղղված էր մի երիտասարդ գրողի եւ ինձ:

Ձեռների մեջ խշրտացրեց թազբեհը եւ մի ումպ թեյ խմեց.

-Ասենք, ես ինչ խեր տեսա հերքելով, որ դուք ինչ խեր տեսնեք: Ինչ հերքել: Տերյանին ոնց հերքես: Սխալ դպված լո՞ւր, թե դիսկուսիոն հոդված է Տերյանը, որ հերքես: Տերյանը մի ամբողջ կուլտուրա է: Կուլտուրան հերքե՞լ կլինի: Մի բան պիտի հասկանալ, - չլիներ Հովհաննես Հովհաննիսյանը, Թումանյանը Թումանյան չէր լինի, ոչ էլ Իսահակյանը՝ Իսահակյան: Իսկ եթե չլինեին Հովհաննիսյանը, Թումանյանը, Իսահակյանը՝ Տերյանը Տերյան չէր լինի: Չլիներ Տերյանը, ես՝ ես չէի լինի, էս բանը լավ հասկացեք...

Թազբեհը նետեց գրասեղանին, նայեց մեզ իր արտահայտիչ աչքերով եւ խորամանկ ժպտաց.

-Մեռա ձեզ խելք սովորեցնելով»:

Տերյանի հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք ուներ մեր մյուս բանաստեղծը՝ Համո Սահյանը: Բնության անպարագիծ ու ամենի խոհը գեղարվեստական պատկերի ու հույզի մեջ արթնացնող, բնությունը մարդկայնացնող, անտառի լռությունն ու բացվող ծառի հրճվանքը, ջրերի հավերժական կարկաչն ու հողի ներամփոփ իմաստությունը, քարափների ամրակուռ ոգին ու ժայռածերպին կպած մենավոր մասրենու թախիծը որպես ճակատագրի մասունքներ ընկալող բանաստեղծը պիտի որ մաշկագերծ թափանցիկությամբ զգար Տերյան բանաստեղծի մենության թախիծն ու տիտրության հոգեմաշ փայլը, նրա հոգու խռովքն ու հողմերից բթացած ժամանակների կարծր դիմադրողականությունը, նրա սերերն ու հիսթափությունները, լույսի ու խավարի իրարամերժ ժիտրում աղաղակող ոգու տիեզերական թռիչքը...

Գրքում ներկայացված են Համո Սահյանի. «Մեր կենսահատոր թախիծը» հոդվածը եւ քաղվածքներ նրա զրույցներից, որ գրի է առել Հ. Հովնաթանը («Համո Սահյան. բանաստեղծը, մտածողը, մարդը»): Համո Սահյանը իրեն հատուկ իմաստությամբ ու բանաստեղծի զգայուն հոտառությամբ է մոտենում Տերյանի ակունքներին, նրան կյանք ու արեւ պարգեւած հող ու ջրին եւ լուսաթաթախ պոեզիային: Սահյանը գրում է. «Ջրերից երկնքի համ են առնում մարդիկ, երկնքից՝ հողի հոտ: Հողից բարձրացող հավքի ոտքերը երկնքոտ են. երկնքից իջնող ամպի թեւերը՝ հողոտ: Դաշտում ասպղերի ծիրկաթիններ են ծավալվում, երկնքում՝ ծաղիկների հեղեղ:

Հաշտ ու համերաշխ հարեւաններ են հողն ու երկինքը՝ իրար դեմ կրնկի վրա մշտապես բացված դռներով: Իրար փոխ են տալիս ու փոխ են առնում ամպ ու գոլորշի, զով ու տաքություն, գույներ ու բույրեր, ժպիտներ ու թախիծ:

Ջավախքի բարձր-բարձր լեռնահովիտն է դա: Տերյանի ծննդավայրը: Պատանի Վանիկի բաց աչքերով տեսած երազն է դա եւ փակ աչքերով տեսած իրականությունը:

Ասում են ծննդավայրը՝ մայրական երգի օրրանը, քիչ տեղ է բռնում Տերյանի ստեղծագործության մեջ: Հատ ու կենտ բանաստեղծություններ եւ որոշ ակնարկ-տողեր ու հատվածներ. մնացածը քաղաքային կյանքն է, քաղաքային միջավայրը, քաղաքային մտավորականի հոգեվիճակը: Թերեւս: Սակայն, մեղմ ասած, այս տպավորությունը կարող է ստացվել միայն մակերեսային ընթերցումից:

Իսկ իրականում ծննդավայրը ներկա է Տերյանի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Իսկ իրականում ծննդավայրն այն հավերյալ աշխարհն է, այն միակ կուսական տեղը, հույսի, սփոփանքի այն միակ հանգրվանը, որտեղ Տերյանն իրեն մաքրված ու թեթեւացած է զգում իր թափառ կյանքի, իր անտուն կյանքի, իր ավերված սրտի, ավերված երազի, ավերված երկրի, քար ու անխորհուրդ աշխարհի հոգսերից, տագնապներից, աղետներից ու ժիտրից: Ծննդավայրը միշտ նրա հետ է, նրանից անբաժան.

-Ես չեմ մոռանում կարոտով
մի հաշտ,
Մանուշակագույն մայրամուտը
միգասքող
Ամպերդ մաքուր՝ ողողված ոսկով,

Եւ քեզ, հայրենի անուշ
լեռնադաշտ:
Կարծես ականջիս հնչում է
բարակ
Ջանգակը գյուղի քարաշեն ժամից,
Որպես մի կռունկ՝ ջոկված
Երամից-
Այնպես լալագին, այնպես
անճարակ:

Ամեն անգամ երբ ոտք եմ դնում Ջավախքի սարահարթին, թվում է, թե ամեն ինչ մթնշաղոտ է եւ անուրջ է ամեն ինչ: Թվում է, թե մթնոլորտը Տերյանով է լցված: Ամեն ինչ Տերյանոտ ու Տերյանահոտ»:

Ինչպես ասում են՝ ավելի լավ հնարավոր չէ ասել:

Տերյանագիտության մեջ մեծ ավանդ ունի նաեւ Տերյանի դուստրը՝ գրականագետ, թարգմանչուհի Նվարդ Տերյանը, որը գրքեր ու բազմաթիվ հոդվածներ է գրել Տերյան մարդու եւ Տերյան բանաստեղծի մասին: Ա. Իսոյանը նպատահարմար է գտել ներկայացնել նրա «Վահան Տերյանի նամակները Անթառամ Միսկարյանին» գրքի առաջաբանը, որը մի հյուսված փունջ է ու նկատելի արժեք տերյանագիտության բնագավառում: Այդ առաջաբանում, ի թիվս բազում այլ հարցերի, Նվարդ Տերյանը անդրադառնում է նաեւ հոր երաժշտական հակումներին, նշելով, որ Տերյանի ստեղծագործության հետազոտողներից ոչ մեկը չի անդրադարձել բանաստեղծի՝ դեպի երաժշտությունն ունեցած վերաբերմունքի հարցին եւ նրա ստեղծագործության վրա երաժշտության ազդեցությանը: Դրա օբյեկտիվ պատճառներից մեկը, հոդվածագրի կարծիքով, այդ հարցը լուսաբանելու համար եղած համապատասխան նյութի աղքատությունն էր:

Մինչդեռ Տերյանի կյանքի ու ստեղծագործության այդ կողմին անդրադառնալու օրինաչափությունը կասկած չի հարուցում, որովհետեւ նրա բանաստեղծությունները ոչ միայն ինքնին չափազանց երաժշտական են, այլեւ առաջացնում են երաժշտական զուգորդություն, որը յուրօրինակ փաստ է հայ պոեզիայի մեջ:

Նվարդ Տերյանը գրում է. «Դեպի երաժշտությունը Տերյանի ունեցած վերաբերմունքի մասին մտածելու առաջին շարժառիթը մորս՝ Անահիտ Տերյան-Եղիազարյանի պատմածն էր այն մասին, թե ինչպես հաճախ (եւ նույնիսկ հենց մեռնելուց քիչ առաջ Օրենբուրգում) բանաստեղծը նրան ստիպում էր դաշնամուր նվագել: Բայց այդ պատմությունն այդպիսի տպավորություն չէր գործի եւ հիշողության մեջ չէր մնա, եթե չլիներ մի շատ հետաքրքիր մանրամասնություն. մայրս, որ հիանալի դաշնամուր էր նվագում, դաստիարակված էր դասական երաժշտությամբ, ամեն անգամ զարմանում էր Տերյանի տարօրինակ երաժշտական ճաշակի վրա. Բեթհովենի կանտատից հետո նա կարող էր խնդրել մորս, որ նվագի Վերտինսկու «Մանուշակագույն նեգրը» երգը...

Անշուշտ, այսպիսի անխորհողությունից կարելի էր հապճեպ եզրակացություն հանել, թե այդ մարդը անտեղյակ էր երաժշտությանը, եւ նրա համար միեւնույն է, թե ինչ է լսում:

Բայց Միսկարյան քույրերին գրած նամակները կարդալուց հետո կարելի է համոզվել, որ դա լոկ մարնամաս է ընդհանրապես երաժշտության վերաբերյալ ունեցած Տերյանի կուռ հայացքի, Տերյանի կյանքում, նրա ստեղծագործության մեջ երաժշտության գրաված տեղի: Նա, որի զգացմունքներն ընդգրկում էին լիրիկական բանաստեղծությունից մինչեւ հեղափոխության մրրկածուփ հորձանուտը, անշուշտ երաժշտության մեջ էլ, որ այնպես կապված է զգացմունքների հետ, պետք է ուներ ոչ նվազ ընդգրկում՝ Վերտինսկու ինտիմ-լիրիկական երգերից մինչեւ Բեթհովենի կրքով լի սոնատները:

Այնուհետեւ Նվարդ Տերյանը նշում է, որ դեռ մանկուց նա անտարբեր չի եղել դեպի երաժշտությունը, որի մասին գրում է բանաստեղծի ավագ եղբայրը. «Հեքիաթն ու երաժշտությունը, պարն ու երգը Վանիկի ցավոտ կողմերից մեկն էր: Երբ երգի կամ զուռնայի ձայն լսեր, եղունգները կրծելն անգամ կմոռանար»:

Անթառամ Միսկարյանը երաժիշտ էր, եւ նրան ուղղված Տերյանի նամակներում այսպիսի տողեր կան. «Երաժշտություն եւ զգվանք»: «Խաղաղ իրիկունով նստեցեք դաշնամուրի առաջ կիսախավարում եւ նվագեցեք որեւէ մեղմ, թախծոտ, զգվող բան...»: «Ձեր տունը պատկերացնում եմ որպես խաղաղ հանգրվան, որտեղ այնքան լավ է նստել եւ լսել դաշնամուրի մեղմ հնչյունները: Այնպես կուզեի հանգստանալ...պարզ, անկեղծ, սիրալիր մարդկանց մեջ»:

Եւ ահա երաժշտության հանդեպ ունեցած նրա հոգեցունց զգացումները դառնում են բանաստեղծություն.

Հնչում է անվերջ աշնան թախիծով
Դաշնամուրն այնտեղ, պատի հետեւում:
Հարազատ է ինձ այդ երգը հեծող -
Իմ անանց ցավով մեկն էլ է ցավում:

Աշնան տխրահեծ անձրեւի նման,
Անձրեւի նման լալիս են անվերջ
Այն հնչյունները մեղմ ու միաձայն՝
Պատի հետեւում եւ իմ հոգու մեջ...

Տերյանագիտության մեջ անուրանալի վաստակ ունի նաեւ գրականագետ Վաչե Պարտիզունին: Վահան Տերյանի մասին նա գրել է բազմաթիվ աշխատություններ, մենագրություններ, իր տեսակետը պաշտպանել ու բանավիճել է շատերի հետ: Տերյանագիտության բնագավառում նրա վերջին ներդրումը բանաստեղծի «Զոների գիրքն» է, որի առաջաբանն էլ ներկայացված է այս գրքում: Սա գիտնականի խիստ արժեքավոր աշխատանք է, որը հատկապես տերյանագիտությամբ զբաղվողների համար գնահատելի գիրք է:

Գրքում տպագրված է նաեւ Վահան Տերյանի հարյուրամյակին նվիրված բանաստեղծ Գեորգ Էմինի խոսքը՝ «Վսեմ Առաքյալը» վերնագրով: Իրեն հատուկ շեշտակի բանաձեւումով Էմինը գրում է. «Ահա մի բանաստեղծ, որը համարյա կարիք չունի «Հատընտիրի»՝ այնպես մի հատ եւ այնքան ընտիր է այն ամենը, ինչ նա ստեղծել է: Եւ ահա մի բանաստեղծ,

որը համարյա հոբելյանի կարիք չունի, որովհետեւ, եթե հոբելյանը որեւէ մեկին վերստին հիշելու համար է, ապա Տերյանին մենք հիշում ենք ամեն օր, եւ այդ իմաստով ամեն օր նրա հոբելյանն է:

Վահան Տերյանի մասին, արեւելյան պերճախոսությամբ ասած, կարելի խոսել «Յոթ օր, յոթ գիշեր» եւ ասելիքն այդպես էլ չսպառել:

...Ինչպես բոլոր իսկական ու մեծ բանաստեղծները, Վահան Տերյանը, - եթե դարն ու ժամանակը պահանջեր, - կարող էր լինել ոչ միայն խոստովանող, այլեւ քարոզիչ, հորդորող, կամ քաղաքացի ու հռետոր բանաստեղծ՝ այդ հասկացության վսեմ ու գերագույն իմաստով: Բայց նրա քարոզն ու հորդորը խոստովանանքի պես հուզիչ էր եւ հեգաքրքիր, որովհետեւ անսիրտ ու անհույզ քարոզչի չոր ճառ չէր, այլ մարգարեի կրքոտ ու շիկացած խոսք:

...Ինչպես ամեն մի իսկական ու մեծ բանաստեղծ, Վահան Տերյանը գիտեր, որ անհնար է մեծ բանաստեղծ լինել առանց մարդ ու քաղաքացի լինելու եւ ոչ միայն այդպիսին էր, այլեւ կարող էր, եթե կյանքը նրա առջեւ դաժան ընտրության հարց դներ՝ լինել ավելի մարդ, քան բանաստեղծ եւ ավելի արդար ու ճշմարիտ, քան բախտավոր ու երջանիկ»:

Մեր մյուս մեծ բանաստեղծը՝ Դարույր Սեւակը, իր ստեղծագործական կյանքում նույնպես բազմիցս անդրադարձել է Տերյանի թե բանաստեղծական եւ թե հրապարակախոսական ժառանգությանը: Երբ 1959 թ. լույս է տեսնում գրականագետ Սաքո Սուքիասյանի «Էջեր Վահան Տերյանի կյանքից», գիրքը, Սեւակը այդ առթիվ հանդես է գալիս «Տերյանը պահանջում է» հոդվածով, որն էլ հենց ներկայացված է այս գրքում: Սա մի փաք ու առկայծումներով բռնկուն հոդված է, որտեղ Սեւակը այլոց նման, մի տեսակ ներքին զայրույթով, անդրադառնում է այն իրողությանը, որ Տերյանի կենդանության օրոք ու դեռ հետո էլ շատերը նրան նույնիսկ հայ բանաստեղծ չեն համարել, ավելացնելով, որ հայ մտքի պահպանողականությունը, բարեբախտաբար, անթափանց չէր: Տերյանին ճիշտ հասկացան ու գնահատեցին այնպիսի «զուտ հայկական» բանաստեղծներ, ինչպիսիք են Թումանյանն ու Իսահակյանը: Եւ ոչ միայն հասկացան ու գնահատեցին, այլեւ ազդարարեցին, որ նա է ուղենշում հայ բանաստեղծության վաղը: Վերհիշենք Ավ. Իսահակյանի խոսքը՝ ուղղված Վահան Տերյանին. «Հիմա քո հազարն է...»:

Այս հանճարեղ եռյակի՝ Թումանյանի, Իսահակյանի եւ Տերյանի մասին խոսելիս, Սեւակը մեջբերում է Տերյանի խոսքը, որով նա դիմել է Թումանյանին ու Իսահակյանին. «Ձեզանից հետո կամ նոր, բոլորովին նոր խոսք պիտի ասել, կամ պիտի լռել»: Եւ իր հերթին հավելում է. «Այս նոր խոսքն ասելով է, որ Տերյանը դարձավ մեծ բանաստեղծ, եւ այստեղ բնավ կարեւոր չէ, թե Թումանյանն ու Իսահակյանը առավել մեծ են: Իսկ եթե նա շարունակեր (հեռու իրենից) նմանվել նրանց, ինչպես որ եթե Չարենցը շարունակեր իր «տերյանականությունը», հայ բանաստեղծությունը պիտի զրկվեր երկու մեծ բանաստեղծից եւ ոչ թե հարստանար եւս մի Իսահակյանով (Տերյանը) կամ եւս մի Տերյանով (Չարենցը)»:

Տերյանի պոեզիայի հանդեպ նույնպիսի ցնծուն պաշտամունք ունի նաեւ Վահագն Դավթյանը: Նա նույնպես բազմաթիվ առիթներով անդրադարձել է Տերյանի կյանքին ու գործունեությանը: Գրքում ներկայացված է Վ. Դավթյանի «Տերյանի նամակները» գրախոսությունը: Վ. Դավթյանը նշում է, որ այդ նամակները գալիս են ոչ միայն ամբողջացնելու բանաստեղծի գրական ժառանգությունը, այլեւ մի նոր լույս փռելու նրա նրբակերտ պոե-

գիայի վրա, մեկնելու այդ պոեզիայի կենսական ու հոգեկան ակունքները եւ մեզ տանելու կյանքի բարդ, դժվար, բայց արգասավոր ուղիներով, որով անցել է բանաստեղծը:

Առհասարակ ստեղծագործող մարդու նամակների ուսումնասիրությունը գեղարվեստական առումով ինքնին արժեքավոր է. նամակներում մարդու էությունը ավելի թափանցիկ է երեւում. մտքերի ու հույզերի թելուկում նրա խառնվածքից կարող է բացահայտվել մի բան, որ նրա գեղարվեստական տեքստերի մեջ չես հանդիպի: Եւ հետո նամակների արժեքը ոչ միայն պատմական-ճանաչողական է, այլեւ արդիական, որովհետեւ դրանց մեծ մասը խիստ արժեքավոր մտքեր են պարունակում գրականության, քննադատության, հրապարակախոսության վերաբերյալ:

Վ. Դավթյանը նշում է նաեւ, որ այդ նամակների ընթերցումը բերում է այն մտքին, որ նուրբ քնարերգուն զուրկ չի եղել նաեւ վեպելու ձեռքից: Վ. Դավթյանը գրում է. «Նրա նամակներում հոգեբանական ու նկարագրական-պատմողական այնպիսի նրբերանգներ են սփռված, որոնք կարող են պատիվ բերել ամեն մի վարպետ արձակագրի:

«Եւ թախիծը... Հենց որ իջնում է աղջամուղջը, գյուղը լռում է, իջնում է իրոք գերեզմանային լռություն, որը երբեմնակի խախտվում է շների հաչոցով: Թվում է, գերեզմանատանն ես ապրում: Ահա հենց այդ ժամանակ է, որ անտանելի ծանր է լինում, եւ հոգիդ պարուրում է ճմլող, կուրծքդ ցավելու ասպիճան սեղմող թախիծը: Եւ թվում է, գիշերը վերջ չունի: Լույսի, որեւէ ձայնի, թեկուզ հաչոցի խելահեղ տենչը համակում է քեզ»:

Ահա եւս մեկ միտք, որ Վ. Դավթյանը մեջբերում է Տերյանի ամենավերջին նամակից. «Ես ինձ լուսավոր ու ջինջ եմ զգում, ինչպես հավանորեն իրենց զգում էին առաջին քրիստոնյաները»...

Վ. Դավթյանը այդ մտքով հիացած հավելում է.

«Լուսավոր ու ջինջ...

Հավատով ապրող, հավատով շնչող մարդու լույս է դա ու մաքրություն...

Բարձր ու մաքուր արվեստի հավատավորն էր Տերյանը, հավատավոր իր տասնապատիկ խոցված «Երկիր Նաիրու»...

Տերյանագիտության մեջ մեծ վաստակ ունեցող գիտնականներից է նաեւ ակադեմիկոս Էդուարդ Ջրբաշյանը: Նա իր ողջ կյանքի ընթացքում առանձնակի հետաքրքրություն է ունեցել Տերյանի պոեզիայի հանդեպ, անբաժան է եղել ոչ միայն Տերյանի գրական ժառանգությունից, այլեւ սերտ կապեր է ունեցել Տերյանի հարազատների եւ հատկապես դստեր՝ Նվարդ Տերյանի հետ: «Նվարդի համար երկրորդ ընտանիքը, ուր իրեն զգում էր հարազատ օջախում, - գրում է Տերյանի դստեր մտերմուհին, - ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի ընտանիքն էր՝ իր ջերմ մթնոլորտով...»: Ա. Իսոյանը նշում է, որ՝ մտերիմների վկայությամբ՝ Ջրբաշյանը անգիր գիտեր Տերյանի գրեթե բոլոր բանաստեղծությունները եւ կարող էր ժամերով արտասանել՝ առանց հոգնելու:

Ջրբաշյանի «Չորս գագաթ» գրքում Վահան Տերյանին հատկացված է մի ամբողջական բաժին: Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի կողքին հեղինակը Տերյանին դիտում է իբրեւ հայ պոեզիայի չորս գագաթներից մեկը: Գիտնականը հատուկ քննության առարկա է դարձնում Վահան Տերյանի բանաստեղծական շարքերը՝ ցույց տալով, որ Տերյանը արեւե-

լահայ առաջին բանաստեղծն էր, որը հեպեւոդականորեն եւ մեծ վարպետությամբ կիրառեց բանաստեղծական շարքերի սկզբունքը:

Գրքում ներկայացված է գրականագետի նոթերից մի հատված՝ «Բանաստեղծը եւ քննադատը» վերնագրով:

Արժեքավոր է նաեւ գրականագետ Սուրեն Աղաբաբյանի արած գործը. նա բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ է գրել մեր դասական ու ժամանակակից գրողների մասին: Բազմիցս անդրադարձել է նաեւ Տերյանին: Գրքում հրապարակված է նրա «Քաղաքագետը եւ բանաստեղծը» (Ստեփան Շահումյանը Վահան Տերյանի կյանքում) հոդվածը:

Տերյանագիտության եւ ընդհանրապես հայ գրականագիտության բնագավառում անուրանալի է լեզվաբան, մատենագետ, հասարակական գործիչ Ռաֆայել Իշխանյանի վաստակը: Նա Տերյանի մասին գրել է բազմաթիվ հոդվածներ եւ ուսումնասիրություններ: Գրքում ներկայացված է նրա «Տերյանը հայ գեղարվեստական լեզվի վերափոխիչ» հոդվածը: Խոսելով Տերյանի լեզվի մասին, նա նշում է, որ դա գրական լեզվի ամենախիստ կանոնին ու զգացողությանը ենթակա մի լեզվառճ էր՝ բոլորովին նոր, ի նորո գտնված: Ռ. Իշխանյանը գրում է. «Հայ գրականության մեջ, երեւի թե, մի ուրիշ բանաստեղծի խոսք այնքան խստորեն առանձնահատուկ չէ, որքան Տերյանինը: Իսկ խոսքի առանձնահատուկ լինելը, երբ այն ներդաշնակ է բովանդակության ինքնօրինակությանը, նույնպես գեղարվեստական արժեք է: Տերյանական խոսքի այդ մեծ յուրահատկությունն ու նրա գեղագիտական ուրույն արժեքը վերզգալու համար բավական է հիշել կամ թվարկել Տերյանի բանաստեղծությունների սկզբնատողերը միայն. «Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում», «Այնպես օրորուն է քայլդ», «Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում», «Բարակիրան նահիրուհին ինձ ժպտաց», «Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն», «Արդյոք հիշո՞ւմ ես՝ անտառ էր, առու», «Ինչ մնաց ինձ՝ ոսկյա մի ցանց, ուրիշ ոչինչ...»:

Ստեղծվեց գրական արեւելահայերենի բոլորովին նոր մթնոլորտ: Թումանյանը, որ գրական լեզուն չոր ու ցամաք, խեղճ ու կրակ բառերի շարան էր համարում, հիացավ այդ նույն գրական լեզվի՝ Տերյանի մատուցած տարբերակով, այն աստիճան, որ առաջարկեց մթնշաղյան 1908 թվականը համարել հայ նոր բանաստեղծության սկիզբ»:

Խոսելով տերյանական լեզվի երաժշտության մասին, Ռ. Իշխանյանը նշում է, որ Տերյանի խոսքարվեստում շոպենյան բնույթի ինչ-որ բան կա, խորաթափանց, նրբագեղ մեղեդիականություն: Տերյանի «Կարուսելի» հնչյունները եզակիորեն տիտուր վալսի ելեւեջներ են, նրա աշնան մեղեդիներն առանց երգահանի ձայնագրման անձեռակերտ նվագներ են: «Գինով եմ, գինով եմ ես էլ» տերյանական վերջին երգը իրոք մեզ արբեցնում է մի խոր երաժշտությամբ:

Իր հոդվածում մի շատ կարեւոր հավելում է կատարում Ռ. Իշխանյանը, գրելով. «Ուշագրավ է այն, որ ութ թվականից հետո էր, որ Իսահակյանը լիովին հրաժարվեց իր բանաստեղծությունները կամ նրանց մի մասը Շիրակի խոսվածքով երանգավորելու հակումից ու ամբողջովին անցավ զուտ գրական լեզվին՝ 1909 թվականին ստեղծելով «Աբու Լալան»՝ նրա պերճ ու շքեղ լեզվով: Հովհաննես Մասեհյանը նույն ութ թվականից հետո սկսեց վերաթարգմանել շեքսպիրյան իր նախկին թարգմանությունները՝ շատ բան վերցնելով տերյանական խոսքից, ստեղծելով մասեհյանական իր հուժկու ոճը»:

Գրքում պատշաճորեն է ներկայացված նաեւ Ջրբաշյանի, Աղաբաբյանի, Իշխանյանի սերնդակից լավագույն գրականագետներից մեկը՝ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ Հրանտ Թամրազյանը: Շատ բեղմնավոր ու սկզբունքային մի գիտական, որ, ի թիվս այլ բազում ուսումնասիրությունների, նույնպես հաճախ է անդրադարձել Տերյանի պոեզիային: Ա. Իսոյանը նպատակահարմար է գտել ներկայացնել Թամրազյանի «Հովհաննես Թումանյան» գրքի «Մի խաղաղ վեճ ստեղծման առեղծվածի շուրջ» գլուխը: Արժեւորելով Տերյանի բանաստեղծության անգնահատելի դերը մեր պոեզիայում, Թամրազյանը գրում է. «Վահան Տերյանի բանաստեղծություններն երկրային անցքերի ու լիցքերի թանձրացումներն են, ապրած ցավերի դրամատիկ պատկերներ, որոնց միջոցով, ինչպես հետո էլ կտեսնենք, անցնում է հոգեբանական զորեղ հոսանքը: Թեեւ արտաքուստ այնպես է թվում, թե Տերյանի երգը որոշ առումով միալար է, սակայն այդ երգը հենվում է բազում կետերի վրա, ստեղծում է հարուստ մի պատմություն, որն առաջ է գնում հոգեբանական բազմապիսի ալիքավորումներով ու ելեւէջներով: Դա բաժանման դրամա է եւ հոգեկան դառն հիսթափություն, կուսական սեր է ու կորստյան տագնապ, ծանր մեղք է եւ լքված գեղեցկության պաշտպանություն, հոգեկան անասելի անակնկալ է եւ սիրո վաճառքի ծանր արձագանք, սիրահարվածի մոլոր որոնումներ եւ հուզող տագնապներ, սրբազան, տանջող հուշ եւ որբացած հոգիների մտերմիկ, ջերմացնող զրույց, գարնան անուշ մտորմունք սիրո մասին եւ կատարյալ կնոջ վառվող երազանք, կեսգիշերային խոհրդավոր պահին լսվող զգեստների շրշյուն եւ փիլիսոփայական ընդհանրացում»:

Եւ խոսքն ամփոփելով՝ Թամրազյանը գրում է. «Բանաստեղծը սիրով ու կարոտով ողողում է աշխարհը, պայծառ թախիծով օծում երազող մարդուն: Նա լսում է գրեթե անլսելի մեղեդիներ, ցավի շշուկներ, զգում է հոգու շարժման ամենամեղմիկ հոսանքները, լայնացնում է երազների ծիրը, այսինքն՝ բացում է իմացության եւ հույզերի նորանոր ծալքեր: Եւ այս բոլորին նա հասնում է հոգեւոր նուրբ տեսողության եւ լսողության, բարոյական արտասովոր զգացողության շնորհիվ»:

Բնականաբար մենք այստեղ չենք կարող անդրադառնալ այն բոլոր հեղինակներին, որոնք իրենց գրախոսություններով, հոդվածներով, հուշերով, տերյանագիտական պրպտումներով ներկայված են այս գրքում, իսկ շատերն էլ Ա. Իսոյանի խոսքով՝ «Գրքի ծավալի պատճառով դուրս են մնացել»: Բայց նա հույս ունի, որ առաջիկայում լույս կընծայի «Վահան Տերյան» ժողովածուի երկրորդ հատորը, որը կամփոփի տերյանագիտության մեկդարյա ուղին:

Մեզ մնում է ավելացնել, որ գրքի տերյանագիտության բաժինը ավարտվում է Հրանտ Մաթեւոսյանով, որ մեծագույն ակնածանք ու ընդգծված խոնարհում ուներ մեր բոլոր մեծերի հանդեպ: Առանձնահատուկ քնքշությամբ էր սիրում Տերյանի պոեզիան: Իր խոստովանությամբ Տերյանի մասին կինոպատմություն գրելու ցանկություն է ունեցել, եւ Հայկինոյի իրավասուներն իսկույն պայմանագրել են:« ...Ի՜նչ լավ է, - գրում է Մաթեւոսյանը, - որ այդ սցենարը չգրվեց եւ չնկարահանվեց, այլապես աղարտված էր լինելու մեր մշակույթի նաեւ այդ սրբապատկերը, իսկ այսպես անաղարտ-մեզանից յուրաքանչյուրն ինչ-որ չափով բեմադրիչ է, բանաստեղծի կյանքի ու գործի ընթերցմանը զուգընթաց ծավալում ու ծածանում է պատկերներ, որոնք ամենեին էլ պակաս չեն այն պատկերներից, որ պիտի լինեն, բայց

բարեբախտաբար չեղան: Զգրված այդ կինոպատմության մեջ եւ գեղջկական ծանր աշխատանք կար, եւ նախնիների համառ մղումը դեպի Եւրոպա եւ լույս, եւ վանքը շինելու դրվագներ, եւ Տեր-Սուքիասի «Տոլստովը», եւ Բրեստ-Լիտովսկի կործանարար պայմանագիրը, եւ գնացքի նույն վագոնում ու թերեւս նույն խցում թուրք քոքված դիվանագետի եւ Վահանի ճամփորդությունը՝ որ Թումանյանի կյանքից էր առնվում, եւ Օրենբուրգի սառը փափաստաներն ու մահը: Մի խոսքով, դա հայ մեծ բանաստեղծ Վահան Տերյանի ողբերգական կյանքն էր եւ ոչ թե մեկ ուրիշինը»:

Վերջում ներկայացնենք արձակագրի խոսքի ամփոփումը, որն էլ համարենք նաեւ այս գրքի մասին մեր ունեցած խորհրդածությունների ու վերլուծությունների ամփոփումը. «...Մենք նրա անմահությունն ենք, ինքը մեր կարիքը ունի, առանց մեզ՝ նաեւ իր ղողանջն էր մարելու, ինչպես որ մարել է, ասենք, Ախթամարի ղողանջը. եւ մեծից փոքր ու ղեկավարից հասարակ մենք բոլորս իր կարքն ունենք, քանի որ մարդու նպատակը վեհ ու վեր մի գեղեցիկ բանի առընչվելն է: Դեպի ինքը ձգտելով՝ մենք այդ վեհին ու վերին ենք ձգտում»:

ՎԱՀԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ